

«ՅՈՂԱՆ ՍԱՐԿԱՒԱԳ» ԹԵ՛ «ՅՈՂԱՆ, ԳԱՒՐԿ»

Պ. Մ. ՄՈՒՐԱԳՅԱՆ

Ավանի եկեղեցին դմբեթակիր հնադուրյն հուշարձաններից մեկն է Հայաստանում, կառուցված 588/90—595/97 թթ. միջոցին<sup>1</sup>։ Բնականաբար, նրա պատերին վիմագրված ու շինարարությանը ժամանակակից արձանագրությունները նշանակալի հետաքրքրություն են ներկայացնում։ Նրանց վերծանություններ ու ուսումնասիրությունները դրսևղվել է պրոֆ. Կ. Ղաֆաղարյանը, հրատարակելով հիրավի շահեկան մի աշխատություն՝ ճշգրտելի ու վերանայելի առանձին տեղերով<sup>2</sup>։ Տողերիս հեղինակը վերջերս առիթ ունեցավ անդրադառնալու այդ ճշգրտելիքներից մեկին՝ արևելյան պատին պահպանված փակագրի վերծանությունը<sup>3</sup>։ Հարցարժան պրոֆեսորը շուրջ 30 տարի առաջ ոչ առանց վերապահության («հավանաբար այդ փակագիրը պետք է կարդալ...») այն ընթերցում էր ԳԱԻՐԿ, նրան համարելով Հովհաննիս կաթողիկոսին «ժամանակակից ոմն»։ Հիշյալ հոդվածում մենք ԳԱԻՐԿ ընթերցումը համարել ենք թյուր, առաջարկելով կարդալ ՍԱՐԿԱՒԱԳ (իմա ոչ թե ՅՈՂԱՆ, ԳԱԻՐԿ, այլ՝ ՅՈՂԱՆ ՍԱՐԿԱՒԱԳ)։ Պրոֆ. Կ. Ղաֆաղարյանը իր վերծանությունը սրբազրելու առթիվ հանդես է եկել «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրությանը հասցեագրված նամակով (1973, № 4, էջ 230—231)։ Այստեղ նա ոչ միայն հավաստում է իր ընթերցումը, այլև անընդունելի է հռչակում Պ. Մուրադյանի «հորինած վերծանության եղանակը ընդհանրապես»։

Այժմ տեսնենք, թե հարցը դիտնականը ինչ կովաններ ու փաստեր ունի.

1. «Յոհաննիս և Գարկ անունները տարբեր բարբրի վրա են գրված, ըստ որում Յոհաննիս անունից հետո բավական ազատ տեղ կա, որտեղ կարող է գրվել Գարկ կամ սահկառագ փակագիրը»։


Այստեղ երկար բացատրություն անհրաժեշտություն չկա. բարբրն ու արձանագրությունը իրենց տեղում են, և յուրաքանչյուր ուր կարող է ստուգել ՅՈՂԱՆ բառի ավարտից մինչև բարբրի եզրը 11,3 սմ է, իսկ փակագրի լայնությունը՝ 22, 7 սմ։ Փակագիրը ինչպե՞ս «կարող է գրվել» այդ «բավական ազատ տեղում», երբ նրանից կրկնակի լայն է։

Ուրեմն՝ փակագրի անջատ գրությունը հարկադրական է (փորագրողը զգուշացել է բարբրի եզրերի վրա գրելուց, մանավանդ որ մի քանի հիուստ պիտի կցագրեր)։ Մեր համոզմամբ, անհրաժեշտ էր հաշվի առնել այս հանգամանքը։

<sup>1</sup> Հանդամանորեն տե՛ս Ա. Բ. Еремян, К вопросу о датировке кафедральной церкви в Аване, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1969, № 3, էջ 47—62։

<sup>2</sup> Կ ա Ր Ո Ղ ա ֆ ա ղ ա Ր յ ա ն, Ավանի երկեղվյան ծածկագիր արձանագրությունը, Երեւան, 1945։

<sup>3</sup> Պ. Մ ո Ւ Ր ա ղ յ ա ն, Դիտողություններ Օձունի արձանագրությունների վերծանության առթիվ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1973, № 6, էջ 76—77։



Նկ. 1


2. «ՅՈՂԱՆ անունը գրված է 11 սմ երկարություն ունեցող գրերով, իսկ Փարկ-ի գրերի երկարությունը 13,5 սմ է: Մի՞թե այդքան զեղեցիկ գրեր քանդակող վարպետը մի բառը կարող էր գրել փոքր գրերով, մյուսը՝ ավելի մեծ»:

Պատճառաբանությունը շատ փաստացի է և եղրակացությունը որոշ՝ երկու բառը երկու տարբեր արձանագրություն է: Բայց իրո՞ք այդպես է: Հինգ տառ ունեցող ՅՈՂԱՆ-ը գրված է տարբեր երկարության գրերով՝ Յ—11,5 սմ, Ո—11,8 սմ, Ա—12,5 սմ, Ն—12 սմ (Հ-ն ավելի մեծ է՝ 13,5 սմ, բայց անկողմնակալ լինելու համար չենք վկայակոչում): Նամակի հեղինակը փոքրացնում է գրերը՝ ՅՈՂԱՆ-ի և փակագրի տարբերությունը մեծացնելու համար: Նա յուրաքանչյուր գրի երկարությունը կրճատել է 0,5 սմ—1,5 սմ-ով և համահարթել (11 սմ) այլպես ստիպված պիտի լիներ ընդունել, որ եթե նույն բառի մեջ մեկ գիրը մյուսից կարող էր շուրջ 1 սմ երկար լինել, ապա միանգամայն բնականոն է նման տարբերություն վակագրի վերաբերմամբ, երբ երկու ստեղծի վրա շուրջ գիր-ելուստ պիտի տեղավորեր: Ինչպես տեսնում ենք, «այդքան զեղեցիկ գրեր քանդակող վարպետը» ոչ միայն «մի բառը կարող էր գրել փոքր գրերով, մյուսը՝ ավելի մեծ», այլ տարբեր երկարության տառերով է գրել նույնիսկ մեկ բառը՝ ՅՈՂԱՆ-ը:

Ավանի եկեղեցու հյուսիսային պատին վիճաբանված է երկու անուն ևս՝ ՄԱԹԵՈՍ և ՅԵՍՍԵ, որոնք անվիճելի առնչություն ունեն կառույցին, բայց ահա, այդ անունները գրված են խիստ առանձնակի թե՛ զբոլորյալ, թե՛ տեղադրությամբ: Այստեղից հետևում է՝ եթե փակագիրը ինքնակա անուն լիներ, ապա պիտի առանձնանար ՅՈՂԱՆ-ից և՛ զբոլորյալ, և՛ տեղադրությամբ, մինչդեռ այն գրված է ՅՈՂԱՆ-ին կից ու նույն ձևով, նույն ոճով (համառ. Յ-ի և Ի-ի ելուստները, Ա-երի ելուստը, փոքրվածքի լայնությունն ու խորությունը և այլն): Այս ամենը մանրուք չէ, և պրոֆ. Ղաֆաղարյանը իզուր է զանց առնում: Եթե վիճում ենք մեր նախնիների գրածը ճիշտ կարգալու և մեկնաբանելու համար, ապա պիտի ընդունենք, որ փակագիրը վերաբերում է ՅՈՂԱՆ-ին: Առ այդ կան բոլոր անխարդախ կովանները:

3. «...առանց սկզբնական ս գրի սարկառագ չի կարող լինել... Մուրադյանը միևնույն ա գիրը երեք անգամ ա է կարգում և մի անգամ էլ՝ ս: Փակագրի մեջ ս գիր չկա»:

Տեղում շեղած և հնագրութեանն անծանոթ ընթերցողը անշուշտ կհավատա և կզարմանա՝ ինչպես կարելի է նույն գիրը և՛ ա կարդալ, և՛ ա: Իրողութունն այս է. մինչև VII դարի 40-ական թվականները Ա-ն վիմագրերում ամենուր և համատարած գրվում է տառամիջյան զուգահեռ սյունագծով, որ ստեղին է միանում ելուստի սկզբնավորման կետում: Այդպես է նաև հենց ՅՈՂԱՆ բառի մեջ՝ գրված, ինչպես ասվեց, փակագրի հետ միաժամանակ ու նույն ձևերով: Բայց ի դարմանս վիմագրագետի, փակագրի Ա-ն առանց այդ սյունագծի է, թեև այն ունենալու ոչ մի խանգարիչ պարագա չկա (նկ. 1): VII դարում Ա-ի երկու ստեղծների վրա հյուսված ուլիշ փակագրեր ու կցագրեր ևս կան, բայց Ա-ն շարունակում է պահպանել իր ներսի սյունագիծը: Այդպես է, օրինակ, Եղվարդի արձանագրութեան մեջ (տե՛ս նկ. 2), ուր Բ և Ր գրերը հեցել են Ա-ի ստեղծներին՝ ԲԱՐ—էՓ[առ], նույնն է և Պեմղաշենի եկեղեցու շինարար վարպետներից մեկին ներկայացնող փակագրում. այստեղ Ա-ի ստեղծներին կցագրված են Դ, Մ, Ի գրերը (նկ. 2): Այդպես է և Մաստարայում:



նկ. 2

Ուրեմն՝ Ավանի փակագրի հեղինակը խուսափել է Ա-ի մեջ սյունագիծ տանելուց մեկ պատճառով՝ այդ դեպքում գիրը կկարդացվեր միայն Ա, իսկ նրան անհրաժեշտ է եղել Ա-ի երկու ստեղծերով այլ գիր ևս հուշել, որպիսին միայն Մ-ն է<sup>4</sup>: Հնագրական այս յուրահատկությունից ելնելով է, որ փակագրում Ա-ից բացի կարդում ենք նաև Ս: Պրոֆ. Կ. Ղաֆաղարյանը հաշվի չի առել, որ փակագրութեան մեջ նույն գիրը Ա և Ս կարդալու փաստը իրեն ծանոթ է և ուշ շրջանի վիմագրութունից. Հաղբատի «սբ Նշանի հս. դրան կամարի տակ» փակագիր կա, որի «աջակողմյան ստեղն առանց դժվարութեան կարդացվում է Նաւայսարդ վերևից ներքև»<sup>5</sup>: Այստեղ առանձին Ս չկա, այլ Ա-ի ստեղծները նախ Ս են կարդացվում, ապա՝ Ա ելուստով: Եթե տեղում Նաւայսարթ անվան արձանագիր այլ հիշատակություն չունենայինք,

<sup>4</sup> Միջնադարյան թև նորօրյա մի «վերծանող» ՅՈՂԱՆ-ի Ա-ն տեսնելուց հետո կռահել է, որ փակագրի Ա-ն առանց սյունագծի է և որոշել է «լրացնել պակասը», բայց, բարեբախտաբար, անվարժ է եղել, ուստի սյունագիծը ժամանակից շուտ թեքել է ու միացրել աջ ստեղին՝ կիսամասից փոքր-ինչ ցած (բնականորեն ելուստի ծայր հասցնելն էր): Այս պարագան պրոֆ. Կ. Ղաֆաղարյանը ժամանակին նկատել է, ուստի հրապարակել է առանց սյունագծի: Այդպիսի մի «սրբագրություն» էլ կատարված է ՅՆՍՍԵՆ բառի երկրորդ Ս-ի հետ՝ Ա-ի ելուստ հավելելով, հավանաբար ՅՆՍԱԵ կարդալու համար:

<sup>5</sup> Կ ա Ր Ո Ղ ա ֆ ա ղ ա Ր յ ա ն, Հաղբատ, Երևան, 1963, էջ 149 (հմմտ. էջ 117, գրչանկար 9): Վավերագրերում, կնիքների վրա և վիմագիր բնագրերում նույն տառանիշը Ա և Ս կարդալու բաղմամբիվ օրինակներ են բերված, Ա. Արրահամյանի «Հայոց գիր և գրչություն» գրքում, որտեղ վկայակոչված են նման փակագրութեան շատ նմուշներ (էջ 191—194):

հարգարժան պրոֆեսորը երևի կառարկեր Ռ. Երզնկյանին, որ Ս և Ա կարգալու կոահողն է և որին այժմ նա հետևում է:

Այսպիսով, փակագրի Ս-ն ոչ թե հորինել, այլ՝ վերծանել ենք:

4. «Մուրադյանը միևնույն և գիրը երեք անգամ ա է կարգում...»

Հետաքրքիր է, նամակի հեղինակի կարծիքով, և՛ թե փակագրվող բառի մեջ երեք անգամ Ա է կարգացվելու, ապա փակագրողը երեք անգամ պիտի այն փորագրեր. էլ ինչո՞ւ էր նա կամեցածի շափ տարածք ունենալու պայմաններում փակագրության դիմում: Հետոն շնորհիվ համար դիմենք մեր վրկայակոչած Պեմզաչենի փակագրին, ուր առկա են Դ, Ա, Մ, Ի գրերը: Տեղադրությունից գիտենք, որ այն քարգործի անունն է, բայց ոչ ԴԱՄԻ, ոչ ԱԴՄԻ, ոչ ՄԱԴԻ և այլն, որ տառաշարք են և ոչ՝ անուն, այլ պարզապես ԱԴԱՄ, և որովհետև նա կամեցել է իր գործը նշել՝ հղումով է ԱԴԱՄԱԻ (թերևս Ադամո[յ] կարգալու համար)<sup>6</sup>: Ինչպես տեսնում ենք, Ա-ն նորից 2—3 անգամ է կարգացվում՝ մեկ փորագրումով: Եղվարդի հիշյալ արձանագրության մեջ ՄենԴՄԱնէ (ուղ. ծնունդ) բառը գրված է մեկ ն-ով, որ անշուշտ կրկին ընթերցում ունի:

5. Պրոֆ. Կ. Ղաֆադարյանը հավատացնում է, թե «Գաւրկ անձնանունը Գեորգ-ի հնում շատ տարածված բարբառային ձևն է և կարգացվել է Գուրկ»:

«Հնում» ասել-անցնելը հեշտ է, բայց հարգարժան պրոֆեսորը կարո՞ղ է Ավանի արձանագրության ժամանակակից կամ գեթ մերձավոր դարերում որևէ օրինակ մատնացուցել, ուր միավանկ բառում ր-ից հետո ՚ր>Կ հրնշ-ունափոխություն է վկայվում<sup>7</sup>: Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» Գորգ անվան 40 վկայություն կա, բայց ոչ մեկ անգամ Գաւրկ կամ Գուրկ<sup>8</sup>: Ի դեպ, Հ. Աճառյանը ծանոթ է Կ. Ղաֆադարյանի արժարժվող աշխատությանը, այնտեղից վկայակոչություն է կատարում<sup>9</sup>, բայց հավելումների մեջ անհրաժեշտ չի նկատել նրա ընթերցած Գաւրկ անձնանունը արտացոլել, հավանաբար վերծանությունը անստույգ համարելու պատճառով:

Կարծում ենք, այլևս պարզ է, որ պրոֆ. Կ. Ղաֆադարյանի ԳԱԻՐԿ ընթերցումը անիրական տառաշարք է և ոչ՝ անձնանուն: Բայց սա պատահական չէ. Կ. Ղաֆադարյանը փակագրերն ու կցագրությունները կարգալիս հաճախ տառերի հերթականությանն է հետևում: Այսպես, օրինակ,

Հովհաննավանքի արձանագրություններից մեկում հանդիպող ԿԿԸ՝

կցագիրը նա կարդում է կգաբ, միևնույն, ինչպես ցույց տվեց վիմագրագետ

<sup>6</sup> Փակագիրը գտնվում է Պեմզաչենի VII դարի եկեղեցու արևմտյան խաչաթևի հյուսիսային պատին, ներքուստ: Ընդօրինակությունը մեղ տրամադրել է ճարտարագետ Լ. Սաղոյանը, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում:

<sup>7</sup> Հարցն այժմ հիմնավորապես ուսումնասիրված է Ս. Ավագյանի կողմից (տե՛ս նրա վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Երևան, 1973, էջ 262—267):

<sup>8</sup> Հատ. Ա, էջ 489—492, հատ. Ե, էջ 302: Չգիտեմք մեր արձանագրությունից 800 տարի հետո հիշատակարաններում հանդիպող Գաւրկէ, Գաւրկի, Գաւրկի անունների հետ:

<sup>9</sup> Հատ. Ե, էջ 327:

Ս. Ավագյանը, այն պիտի վերծանել ԿԱՐԳ (իմա ժ կանոն կարգ): նույն

վանքի մեկ այլ վիճագրում ԴԸ փակագիրը Կ. Ղաֆաղարյանը կար-

դում է դար, մինչդեռ, նույն Ս. Ավագյանի ապացուցմամբ, գրված է ԱՐԴ<sup>10</sup>, Վարադավանքի կցագիր ԹԱՄԱՐ անձնանունը նույն սկզբունքով նա կարգացել է Թաար և հանգուցյալ իշխանուհուն դարձրել «մեր երեւելի քանդակագործներից մեկը»՝ Թաար անունով, և այլն<sup>11</sup>:

Ցավալի է միայն, որ հարգարժան գիտնականը իր ընթերցումը հավաստի դարձնելու համար պատրաստ է անընդունելի հայտարարել մեկ ուրիշի վիճագրական հետազոտությունները: Բայց առավել ցավալի է, որ նա չի խնայում Ավանի տաճարը կառուցած շնորհաշատ ճարտարապետին, հարկադրելով նրա անունը կարգալ անդամահատությամբ՝ ՅՈՂԱՆ, Գաւրկ, և ոչ ՅՈՂԱՆ ՍԱՐԿԱԻԱԳ, ինչպես նա իրեն կոչել է: Որքան էլ սրամիտ լինի մեկ յիակագրումով Պատմահոր աշխատություն և միջնադարյան մատենագրութուն կարգալու նրա առաջարկը, այնուամենայնիվ՝ Գաւրկ ընթերցմանը յիաստարկ ծառայել չի կարող:

Մերժելով մեր «Դիտողություններ Օձունի արձանագրությունների վերծանութեան առթիվ» հոդվածում տրված սաւրկաւագ ընթերցման դեմ եղած առարկությունները, անհրաժեշտ ենք համարում նկատել, որ այդ ուսումնասիրութեան մեջ կան իրապես սրբագրելի այլ տեղիներ: Հարավային շքամուտքի բարավորի արձանագրությունը վերծանելիս ձեռքի տակ ունեինք Գ. Շախկյանի գրչանկարը (այդ նշված է իր տեղում): Սակայն Ս. Ավագյանի գրառմանը և Գ. Շախկյանի նորերս կատարած լուսանկարին ծանոթանալուց հետո համոզվեցինք, որ ԲԱՐՈՒՈՒ Բառի վերջին Ո-ին Ր է կցագրված, հետևաբար ԲԱՐՈՒՈՐ պիտի ընթերցել (գրութունը արժանի է մասնավոր քննութեան): նույն Գ. Շախկյանի ջանքերով մեր հոդվածի հրատարակումից հետո, ծեփագրեցված է արեւելյան ձակատի արձանագրութեան ավարտամասը, որից երևում է, թե ԲԵՒՈՒՈՐՈՒՍ-ից հետո ինչ-որ բառ է եղել, սակայն վերականգնելիքը պարզ չէ (Տիրո՞ն, Ատուտեյա՞տ, Զինուո՞ւ, թե՞ ամէն): Վերապահելի պիտի համարել Շ[ԻՆԱԻՂ] ընթերցման Ղ-ի ելուստի առկայութունը: Արվեստագետ Լ. Ազարյանը գտնում է, որ խաչաքանդակի վրա պատկերված սուրբը Աստվածածինը պիտի լինի՝ մանուկով: Նման մեկնաբանութուն առաջ էլ է ասվել, որ գուցե և ավելի ճշմարտամոտ է, թեև քանդակի տակ պահպանված տառահետքերից կարծեք հնարավոր է «Բեոդորոս» մակաբերել: Բ հաստատումն մեր դրույթի, թե «նախապես ճարտարապետական ամբողջական հորինվածքի մեջ խաչի ու սրբի քանդակ ունեցող քարի տեղադրութուն չի ակնկալվել», այժմ պիտի ավելացնենք, որ սկզբնապես ծրագրելու դեպքում այն կտրվիր արեւելյան ձակատի ճիշտ միջամասում, ավագ խորանի պատուհանին համամաս, այնինչ նկատելի խոտորված է:

<sup>10</sup> Ս. Ավագյան, վիճագրական սրբագրումներ, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 4, էջ 221:

<sup>11</sup> «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 2—3, էջ 280—281:

## «ИОАНН ДЬЯКОН» ИЛИ «ИОАНН, ГОРК»?

П. М. МУРАДЯН

## (Резюме)

На восточной стене церкви в Аване, рядом с именем *Յոհան* (Иоанн), высечена монограмма, которую проф. К. Кафадарян читает как самостоятельное имя — *Գորկ* (Горк). По нашему мнению, такое чтение не вытекает из реального палеографического своеобразия монограммы, не учитывает данные армянской эпиграфики VII в. и ряд других обстоятельств лингвистического и архитектурного порядка.

В статье приводятся доказательства, позволяющие расшифровать монограмму как *մարտիրոս* (дьякон), и делается заключение, что налицо имя и духовный сан архитектора церкви конца VI в. *Иоанна дьякона*.